

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 204

Եբրայեցի գրքի զգուշացումները – Երկու հատածներ որն յաճախ գործածուած են որպէս փաստ որ իրական հաւատացեալներ կարող են կորցնել իրենց փրկութիւնը Եբրայեցի 6:4-6 ու 10:26-29 են: Սրանք շատ նման զգուշացումներ են, վարուելով նոյն խնդիրի հետ: Ինչպէս նշեցինք անցեալ դասերում, այսպէս զգուշացումները Աստուծոց գործածուած միջոցներ են շեղելուց պահելու Իր սեփականին, բայց նաեւ բացայայտելու նրանց որոնք ճշմարիտ հաւատացեալներ չեն (Ա. Կորնթացի 11:19, Եբրայեցի 3:6, Ա. Յովհաննէս 2:19):

Եբրայեցի 6:4ում հեղինակը ասում է թէ այս անձերը մէկ անգամ լուսաւորուած էին, որը պարզապէս ակնարկում է Քրիստոսի առթիւ ճշմարտութիւնը լսելուն ու հասկանալուն. սակայն, այդ անպայման չի նշանակում փրկութիւն: Ինչպէս ասել ենք անցեալ դասերում փրկարար հաւատքը ներառում է աւետարանի մասին գիտութիւն, այն նաեւ ներառում է այդ բաների նկատմամբ համաձայնութիւն, սակայն այն ներառում է նաեւ վստահութիւն, ուր անձը վստահում է Քրիստոսին իր փրկութեան համար (Եբրայեցի 11:1, Յակոբոս 2:14-26): Լուսաւորուած լինելը կամ աւետարանի հասկանալը փրկուելու հետ նոյնը չի:

Այնուհետեւ հեղինակը ասում է որ այդ մարդիկ «այն երկնաւոր պարգեւի համն առած» են: Այստեղ «համն առած» բայը պատկերաւոր իմաստով է գործածուել նշելով մի բանի տեսնելը, ճաշակելը կամ գիտնալը՝ ուր անձը կարող է հաւանել կամ չհաւանել այդ ինչը որ նա համտեսել է: Այստեղ երկնաւոր պարգեւը կարելի է որ նշում է Աստուծոյ ու Նրա Խօսքի բարութիւնն ու զօրութիւնը (համ. 5). այդ գուցէ նաեւ ակնարկում է նրանց հաղորդութեան սեղանին մասնակցութեան: Համտեսել այսպէս բաներ դարձեալ փրկուելու հետ նոյնը չի (Մաղմոս 34:8, Յովհաննէս 6:35, 40, 47, 54):

Հեղինակը 4րդ համարի վերջումը ասում է թէ նրանք «Սուրբ Հոգուն մասնակից եղած» են: Յունարէն բառը որը թարգմանուել է որպէս «մասնակից եղած» կարող է ունենալ մի շարք իմաստներ՝ մէկ ձեռքի վրայ այդ կարող է նշանակել մի սերտ մասնակցութիւն կամ հաղորդակցութիւն Սուրբ Հոգու մէջ կամ հետ, ակնարկելով մի փրկարար յարաբերութեան (Եբրայեցի 3:1, 14). իսկ միւս ձեռքի վրայ այդ կարող է պարզապէս նշանակել Հոգու հետ մի փորձառութիւն (Եբրայեցի 2:4, նաեւ տեսել Ղուկաս 5:7, Եփեսացի 5:6-7): Ուստի հնարաւոր է որ այդ մարդիկ լինէին Սուրբ Հոգուն մասնակից, ու նրանց կեանքերը լինէին որոշ չափով փոխուած, սակայն դարձեալ այդ անպայման չի նշանակում լինել փրկուած:

Երբ Աստուած ազատագրեց Հրէաներին Եգիպտոսում եղած իրենց ստրկութիւնից, Նա դուրս հանեց նրանց շատ հրաշքներով, տապալեց նրանց թշնամիներին, պաշտպանեց, կերակրեց, ու առաջնորդեց նրանց անապատում: Ամեն այն մարդիկ որն դուրս եկան Եգիպտոսից համտեսան բոլոր այդ երկնաւոր օրհնութիւնները (Ա. Կորնթացի 10:1-4): Սակայն իրենց արաքներով դրանցից շատերը փաստեցին որ նրանք Աստուծոյ ճշմարիտ հետեւորդները չէին, եւ Աստուծոց բնաջնջեցին (համարներ 5-10, Եբրայեցի 4:1-3): Նոյնիսկ շատեր Քրիստոսի ծառայութեան ընթացքում տեսան ու ճաշակեցին բազմաթիւ աստուածային օրհնութիւններ (Մատթէոս 7:28-29, Մարկոս 1:21-28, 6:32-44, 53-56, Ղուկաս 4:40-41). բայց այս բոլորի հանդերձ ժողովրդի մեծամասնութիւնը հաւատացեալներ չէին: Այս էր նաեւ պարագան որոշ մարդկանց վերաբերեալ որն հետեւում էին Քրիստոսին աւելի մօտիկից՝ կեղծ աշակերտները (Յովհաննէս 6:64-66, 11:45-46), Յուդա Իսկարիովտացին լինելով ուրացողապետը (Յովհաննէս 6:70-71):

Հակառակ այն ինչ որ Արմէնականներն են պնդում, նրանք որոնք ակնարկուած են Եբրայեցի 6-ում ճշմարիտ Քրիստոնեաներ չեն որ կորցրին իրենց փրկութիւնը. փոխարէն, սրանք են նրանք որն դաւանեցին լինել հաւատացեալներ սակայն չունէին փրկարար հաւատք: Հեղինակը նշում է թէ անկարելի կ'լինի «որ նրանք դարձեալ նորոգին ասպաշխարութեան համար» քանի որ նրանք չեն մերժում Քրիստոսին տգիտութեան պատճառով, այլ բաւարար յայտնութեամբ ու փորձառութեամբ: Հեղինակը ասում է որ նրանք «Աստուծոյ Որդուն իրանց համար կրկին խաչեցին»: Այս նշանակում է որ նրանք մերժում են Քրիստոսի խաչի արժանիքը, եւ յայտարարում են Նրան որպէս մի մեղաւոր յանցագործ՝ խաչելութեան արժանի: Առաւել, նրանք Քրիստոսին «խայտառակ արին»: Այս նշանակում է որ այդպէս մարդիկ չեն պարզապէս մերժում Քրիստոսին առանձնաբար, այլ հրապարակաւ անպատում եւ բացայայտօրէն խայտառակում են Նրան: Նրանց արտերը աւելի է խստանում, եւ այլեւս չկայ ասպաշխարութեան ոչ մի յոյս նրանց համար (Փիլիպպեցի 3:18-19): Այս ամենից յետոյ, սաստկութեամբ մերժելով Քրիստոսին եւ Նրա զոհը այդպիսիները փաստում են որ նրանք երբէք փրկուած չէին եւ ուստի մնում են Աստուծոյ կրակոտ դատաստանի տակը (Մատթէոս 12:31-32, Եբրայեցի 10:26-29):

Այսպիսի լուրջ զգուշացումներից յետոյ, հեղինակը Եբրայեցի 6:9ում եւ 10:39ում դարձնում է իր ուշադրութիւնը ճշմարիտ հաւատացեալներին, քաջալերելով նրանց, եւ արտայայտելով իր վստահութիւնը թէ նրանք բարի պտուղ կ'տան, եւ դրանով կ'ցուցադրեն իրենց հաւատքի եւ փրկութեան իրականութիւնը: Աստուծոյ ժողովուրդը կ'յարատենն մինչեւ վերջը, որովհետեւ այն Աստուած է որը պահպանում է նրանց, եւ Նա անում է այս Իր կարգած զանազան միջոցների գործածութեամբ. իսկ նրանք որոնք չեն յարատեւում մինչեւ վերջը փաստում են այն իրականութիւնը որ նրանք երբէք չունէին հաւատք եւ երբէք չէին պատկանում Աստուծոյ ժողովրդին: